

**ՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆԹՅՈՒՆ** (< հիդրո...  
և երկրաբանություն), գիտություն ստոր-  
երկրյա ջրերի մասին: Ուսումնասիրում է  
դրանց բաղադրությունը և հատկանիշնե-  
րը, ծագումը, տարածման և շարժման օրի-  
նաչափությունները, ինչպես նաև փոխազ-  
դեցությունը ապարների հետ: Հ. սերտո-  
րեն կապված է հիդրոլոգիայի, երկրաբա-  
նության (այդ թվում՝ ինժեներական երկ-  
րաբանության), օդերևութաբանության,  
երկրաքիմիայի, երկրաֆիզիկայի և Երկրի  
մասին այլ գիտությունների հետ: Տեսվե-  
լով մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիա-  
յի տվյալների վրա, լայնորեն կիրառում է  
դրանց հետազոտման մեթոդները: Ժա-  
մանակակից Հ. ընդգրկում է երկրաբա-  
նական գիտելիքների մի լայն բնագավառ,  
որտեղ սկսել են զարգանալ բազմաթիվ  
ճյուղեր՝ ընդհանուր Հ., ստորերկրյա ջրե-  
րի դինամիկա, ստորերկրյա ջրերի ռեժի-  
մի և հաշվեկշռի մասին ուսմունք, հիդրո-  
երկրաքիմիա, հանքային, արդ. և թերմալ  
ջրերի մասին ուսմունք, ստորերկրյա ջրե-  
րի որոնումների և հետախուզության մա-  
սին ուսմունք, մելիորատիվ Հ., օգտակար  
հանածոների հանքավայրերի Հ., ռեզիո-  
նալ Հ.:

Ը ն դ հ ա ն ու ր Հ. ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի ծագումը, նրանց ֆիզիկական և քիմ. հատկությունները, փոխազդեցությունը ներփակող ապարների հետ։ Ս տ ո ր ե ր կ ր յ ա ջ ր ե ր ի դ ի ն ա մ ի կ ա ն հետազոտում է ստորերկրյա ջրերի շարժումը բնական և արհեստական գործոնների ազդեցությամբ, մշակում շահագործողական հորատանցքերի արտադրողականության և ստորերկրյա ջրերի պաշարների քանակական գնահատման մեթոդներ։ Ս տ ո ր ե ր կ ր յ ա ջ ր ե ր ի ռ ե ժ ի մ ի և հ ա շ վ ե կ շ ո ի մ ա ս ի ն ու ս մ ու ն ք ը քննարկում է ստորերկրյա ջրերի այն փոփոխությունները, որոնք ընթանում են զանազան բնական գործոնների և մարդու գործունեության ազդեցությամբ։ Հ ի դ ր ո ր ե ր կ ր ա ք ի մ ի ա ն ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի քիմ. բաղադրության ձևավորման պրոցեսները և այդ ջրերում քիմ. տարրերի միգրացիայի օրինաչափությունները։ 1930-ական թթ. ինքնուրույն նշանակություն է ձեռք բերում ռադիոիդրոերկրաբանությունը, որն ըգբաղվում է ստորերկրյա ջրերում ռադիոակտիվ տարրերի միգրացիայի հարցերով։

Նանքային, արդյունաբերական և նթերմալ ջրերի մասին ուսմունքը հետազոտում է հանքային ջրերի քիմ. բաղադրությունը և ծագումը, նրանց դասակարգումը հիմնական գենետիկական տիպերի, պատկերացում է տալիս հանքային ջրերի հանքավայրերի ու ռեսուրսների մասին և լուծում դրանց գործնական կիրառման պրոբլեմները (հիմնականում առողջարանա-սանատորական բուժման համար): Տարբեր տարրերի (յոդի, բրոմի, բորի, ստրոնցիումի, լիթիումի, ռադիումի) բարձր պարունակությամբ ջրերը, որոնք ստացել են արդանունը, ուսումնասիրվում են՝ դրանցից նշանակած տարրերը կորզելու նպատակով: Թերմալ և տաք ջրերի հանքավայրերի որոնումները, հետախուզությունը և հետազոտումը կատարվում է քաղաքների և բնակավայրերի ջերմաֆիկացման համար: Ստորև կրյա ջրերի որոնումների և հետախուզության մասին ուսմունքը մշակում է ջրամատակարարման, ռոռզման և այլ նպատակների համար անհրաժեշտ ստորերկոյա ջրերի հանքավայրերի հայտ-

թյան մասին ուսմունքը մշակում է ջրամատակարարման, ռոռզման և այլ նպատակների համար անհրաժեշտ ստորերկոյա ջրերի հանքավայրերի հայտ-

նաբերման եղանակներ, տալիս այդ հանքավայրերի քանակական և որակական գնահատականը նն: Մելիք որատիկ Հ. մշակում է ոռոգելի և չորացվող տարածքների հիդրոերկրաբանական պայմանների բարելավման մեթոդներ դրանց առավել ռացիոնալ գյուղատնտ. յուրացման նպատակով: Օգտակար հանածոների հանքավայրերի հանքավայրերի գումարի մշակում է ստորերկրյա ջրերի ուսումնասիրությամբ: հանքավայրերի երկրաբանա-արդյունաբերական գնահատման, նրանց յուրացման և մշակման խնդիրների տեսանկյունից: Զարգանում են երկու ուղղություն. կարծր օգտակար հանածոների հանքավայրերի Հ. և նավթագազեր հանքավայրերի Հ., որը բացատրվում է այդ օգտակար հանածոների հետախուզության, յուրացման և արդյունահանման յուրահատկությամբ: Առանձնացվում է հանքավայրերի միջոցառումներ և մշակում ստորերկրյա ջրերի դեմ պայքարելու համար: Ընդունակ հ. հետազոտում է տարբեր բնական պայմաններում ստորերկրյա ջրերի տեղաբաշխման օրինաչափությունները: